338.98
Շ-16

07 FEB 2010

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

Մ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՑԵՐԿՐՈՐԴ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՇՆԱՆԱՑԱՆԸ

ՊԵՏՀՐԱՏ • 1931 • ՏԵՐԹՎԱՆ

12 JUL 2013

32.048

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6750 (Բ)
ՀՐԱՏԱՐԱԿ. 1931
ՊԱՏՎԵՐ 5006
ՏԻՐ. 5000

338.98
Ճ-16
Ա

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՇՆԱՆԱՑԱՆԸ

Այս յերկրորդ տարին է, ինչ կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ավելի կազմակերպված կերպով դիմավորում են աշնան գյուղատնտեսական կամպանիային։

Յերկրորդ բայլշեվիկյան աշնանացանը կատարվելու յե նորանոր կոլտնտեսությունների յեվ խորհտնտեսությունների կազմակերպման յեվ նրանց ամրապնդման նշանաբանի տակ։

Այս աշնանացանի կամպանիայի ընթացքում կազմակերպչորեն և տնտեսապես ավելի պիտի ամրապնդենք գոյություն ունեցող կոլտնտեսությունները և կազմակերպենք նորերը, դրանով իսկ ապահովելով կուսակցության կենտկոմի դիրեկտիվի կենսագործումը, ըստ որի բամբակացան շրջաններում կոլեկտիվացումը հիմնականում ավարտվելու յե 1932 թվին, իսկ Հայաստանի մյուս շրջաններում, 1932-33 թ.

Յերկրորդ բայլշևիկյան աշնանացանի կամպանիայի ընթացքում բերքի ճիշտ բաշխում պետք է կազմակերպվի կոլտնտեսություններում։ Պետք է վճռականորեն պայքար մղել բերքն ըստ շնչի բաժանելու կուլակային լոզունգի դեմ՝ և հետևել, որպեսզի նման տենդենցները վճռական հակահարված ստանան կոլ-

[illegible] անդամների կողմից։

ՊԵՏ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ—СССР
ԱՆՎԱՆ Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ
им. А. Масисяна
15832 - 57

Այս աշնանացանի ընթացքում ավելի բարձր աստիճանի վրա պետք է դնել աշխատանքի նոր մեթոդների կիրառումը, բոլոր կոլտնտեսականներին ընդգրկել սոց.-մրցման և հարվածայնության մեջ, որինակելի, հարվածային կոլտնտեսականներին պարգևատրել համապատասխան ֆոնդից։

Գործավարձը ճիշտ կիրառելով, պետք է վերացնել այդ ասպարեզում մինչև այժմ յերևան յեկող բացերն ու տարավարությունները, գործավարձը հասցնելով ամեն մի տրակտորիստին, խորհ. տնտեսության բանվորին և կոլտնտեսականին։ Ճիշտ կիրառելով գործավարձը, բարձրացնելով աշխատանքի դիսցիպլինան, մենք կազատենք հսկայական թվով աշխատող ձեռքեր և նրանց կտրամադրենք սոցիալիստական արդյունաբերության։

Ցերկրորդ աշնանացանին մեծ դեր ունեն կատարելու Խորհրդային Հայաստանում կազմակերպված մեքենա-տրակտորային կայանները. գարնանացանի ընթացքում նրանք ապացուցեցին կոլտնտեսարժման լծակի կոչումը, նրանք կատարեցին, նույնիսկ գերակատարեցին իրենց պլանները։

Ցերկրորդ բայլչիկյան աշնանացանի ընթացքում, նրանք նոր թափ պետք է տան մեր գյուղատնտեսության վերակառուցմանը, ոժանդակեն անհատ տնտեսատեր չքավոր ու միջակ տնտեսություններին բռնելու կոլեկտիվ տնտեսությունների հանապարհը։

Աշնանացանի ընթացքում պետք է վճռական հակահարված տրվի կուլակ-դաշնակների փորձերին, վրեժից նպատակն է վիժեցնել աշնանացանի կամպանիան։ Աջ և «ձախ» ոպորտյունիստները վճռական հակահարված պետք է ստանան։ «Որյեկտիվ» պատճառների հետևում թաղնվողները և պլանների վոչ ռեալ լինելու մասին խոսողները պետք է տեղն ու տեղը հակահարված ստանան, վորպեսզի ապահովվի յերկրորդ բայլչիկյան աշնանացանի պլանների կատարումն ու դերակատարումը։

Այժմյանից պետք է լայն բացատրական աշխատանք ծավալել աշնանացանի կամպանիայի շուրջը— պլանները հասցնել գյուղը, յուրաքանչյուր կոլտնտեսականին, չքավոր ու միջակ անհատ տնտեսություններին, Մ. Տ. Կայանին, խորհտնտեսության և այլն։

Աշնանացանի պլանները պետք է քննության դրվի բոլոր կազմակերպությունների՝ կուսբջիջի, կոմերիտմիության, չքավորության, կին պատգամավորների, գյուղխորհրդի և հասարակական ժողովներում։ Կուլակ և ուռճացած տնտեսությունների համար պետք է մշակել կայուն առաջադրանքներ և տալ նրանց։ Գարնանացանի ժամանակ, վորոշ շրջաններում, մատների արանքով ելին նայում կուլակներին կայուն առաջադրանք տալուն կամ առաջադրանք տալուց հետո չելին ստուգում նրանց կիրառումը, գործը թողնում ելին ինքնահոսի։ Այժմ պետք է խուսափել նման սխալներից։ Ամեն կերպ պետք է հանդես բերել կուլակների հովանավորողներին ու պայքարել այն ոպորտյունիստների դեմ, վորոնք գտնում են, վոր իբր թե այլևս կուլակ-ունեվոր տարրեր չկան մեզ մոտ, վոր իբր թե նրանք զսնվում են ուրիշ տեղ, մեզնից հեռու մի այլ վայրում, յեվ կամ թե եղ կարիք չկա պայքարել նրանց դեմ կայուն առաջադրանքների միջոցով և այլն։ Հաղթական դափնիների վրա հանգչող ոպորտյունիստներին վճռական հակահարված տալով միայն հնարավոր է իրական բե-

ել կուլակ-ունեվոր տնտեսություններին հնարավորությունները, նրանց կայուն առաջադրանքներ տալու համար։

Գարնանացանի կամպանիայի ժամանակ վորոշ շրջաններում (Ղամարլու, Վաղպատ) մի շարք կոպիտ սխալներ կատարվեցին, ունեվոր տարրերին փոխանակ ստիպել ու կատարել նրանց տված կայուն առաջադրանքները, գնացին ամենաթույլ դիմադրության ճանապարհով և այդպիսի տարրերին ընդունեցին կոլտնտեսությունների մեջ։

Նման աջ պրակտիկա չպետք է թույլ տրվի, այլ պետք է վարել հստակ բոլշևիկյան դիծ, հանդես բերելով կուլակ-ուռճացած տնտեսությունների օբյեկտները, տալ նրանց առաջադրանքներ, հսկել, վոր նրանք կիրառվեն կյանքում։

Ցնրկրորդ բոլշևիկյան աշնանացանի առաջ կանգնած հիմնական խնդիրներն են՝ ընդարձակել տեխնիկական մշակույթների համար վարվելիք հողի տարածությունը մաքսիմում չափերով լայնացնել աշնան ցանվող ցորենի ցանքը ինչպիսի գարնան ցանվող տեսակների, ավելացնել տեսակավոր սերմերի ցանքը, ամբողջ սերմացուն դուրս, ախտահանել, կատարել շարքացան, աշնան ցել, արտ, և մի շարք ագրո-ձեռնարկների միջոցով ապահովել բերքատվության բարձրացումը։ Այս բոլոր խնդիրները պետք է սեր կերպով կապել կոլեցտիվացման շարժման նոր վերելքի յուր կոլեցտիվությունների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման հետ։

30 ՑԵՎ. 31 Թ. Թ. ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ներքև բերված տախտակն, ըստ սեկտորների, ցույց է տալիս, թե ինչ հսկայական տարբերություն ունի

այս աշնանը ցանվելիք աշնանացանի տարածությունը 1930 թվի հետ համեմատած։

Տախտակ № 1

Թ. վական	Խորհ. տնտես.	Կոլտնտ.	Անհատ. տնտ.	Ընդամենը
1930 թ.	1·250	12·173	80·517	93·957
1931 թ.	1·520	50·170	63·480	115·170

Ցեթե 1930 թվին ցանվել է 93.957 հեկտար, 1931 թվին պետք է ցանվի 115.170 հեկտար։

Այս տարվա աշնանացանն ավելանալու է 21.213 հեկտարով, (առը 22,6 %), իսկ յեթե հաշվելու լինենք մի ջին բերքը մեկ հեկտարից 10 ցենտներ, ապա կստանանք 212,130 ցենտներ ավելի բերք՝ քան 1930 թվին։

Այժմ տեսնենք ինչ պատկեր է ներկայացնում ցանվող տարածությունը ըստ սեկտորների։

1. Խորհ. տնտեսությունների ցանելիք տարածությունը լայնանալու է 270 հեկտարով, այսինքն՝ 21,5 տոկոսով ավելի 1930 թվի համեմատությամբ։

2. Կոլտնտեսությունների ցանքի տարածությունն ավելանալու է 37.997 հեկտար, այսինքն 412 % ավելի, քան 1930 թվի աշնանացանի ժամանակ ցանածը։

Կոլտնտեսությունները չորս անգամ անցյալ տարվանից ավելի յեն ցանելու, այսինքն՝ 50.170 հեկտար աշնանացանք յեն կատարելու։ Առաջին անգամ հսկայական մասսիվները վարվելու և ցանվելու յեն մեծ մասամբ մեքենայով, վերացնելու յեն բոլոր բմբերն ու միջնակները։

Կոլտնտեսությունները, կատարելով ու դերակա-

տարեկով իրենց պլանները, կապացուցին գործնական նում մեր տեմպերից վախեցող ոպորտունիստների վառ նշանակությունը։

Անհատական սեկտորն անցյալ տարվա 80.517 հեկտարի դիմաց ցանելու է 63.480 հեկտար, այսինքն՝ 17.037 հեկտարով պակաս։ Սա նշանակում է վոր չքավոր ու միջակ նորանոր տնտեսություններն են ներգրավվելու կոլտնտեսություններում, վորի հետևանքով ավելանալու է վերջիններիս ցանքսերը ի հաշիվ անհատական տնտեսությունների, իսկ մյուս կողմից կոլտնտեսություններն իրենց տնտեսական-արտադրական կարողությունների աճման շնորհիվ հնարավորություն են ստացել ոգտագործելու անոգտագործելի հողամասեր և դրանց հաշվին ևս ավելացնել իրենց ցանքի տարածությունը։

Բայլնիկյան յերկրորդ աշնանացանի պլանների կատարումն ուժեղ հակահարված կտա բոլոր կոնդրատյեվականներին, վորոնք անհատական-կուլակային տնտեսության գովքն են յերգում, խոսում են անհատական տնտեսության դիմացկուն լինելու մասին և այլն։

Աշնանացանի տարածությունն ըստ շրջանների բերած տախտակից յերևում է, վոր բամբակագործական շրջանները՝ Ղամարլուն, Ղուրդուղուլին, Վաղարշապատը և Վեղին կրճատում են աշնանացանի տարածությունը և այդ տարածությունը նախապատրաստում են գարնանը բամբակ և այլ տեխնիկական կուլտուրաներ ցանելու համար։

Այդ չորս շրջաններում 1930 թ. ցանվել է 13.285 հեկտար աշնանացան, իսկ 1931 թվին ցանվելու է 5.740 հեկտար, այսինքն 1930 թվի աշնանացանի 43 %-ը, ամենից քիչ ցանելու է Ղուրդուղուլին, վորպես հիմ-

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1930—1931 թ.

Տախտակ № 2.

№ №	ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ	1930 թ. Տարածութ. հեկտարներով				1931 թ. Տարածութ. հեկտարներով				Ծանոթութ.
		Քարտ. տնտես.	Կոլ. տնտես.	Անհատ. տնտես.	Ընդամենը	Քարտ. տնտես.	Կոլ. տնտես.	Անհատ. տնտես.	Ընդամենը	Աճման տոկոսը
1	Ալավերդի	—	840	7139	7979	—	2950	5050	8000	100,3
2	Ախտա .	—	167	1233	1400	—	1800	3700	5500	392,8
3	Աղբաբա .	—	106	157	263	—	500	1000	1500	570,3
4	Աշտարակ .	—	766	4947	5713	—	4300	3700	8000	140%
5	Աբարան .	—	81	239	320	—	730	1990	2720	850
6	Բասարգեչար	475	296	229	1400	1000	1500	2000	4500	321,4
7	Գորիս . .	—	1655	6335	7990	—	4700	4000	8700	108,8
8	Դարալագյազ	—	72	5110	5182	—	1610	4190	5800	111,9
9	Դիլիջան .	—	158	3247	3405	—	1550	2900	4450	130,7
10	Թալին . .	—	206	2769	2975	—	900	2900	3800	127,7
11	Իջևան . .	—	544	4831	5375	—	3000	2200	5200	96,7
12	Լենինական	630	1104	1896	3630	500	3450	2050	6000	166%
13	Կոտայք . .	10	1411	6779	8200	20	3890	4130	8040	98
14	Ղարաքիլիսա	—	87	2055	2142	—	1000	2000	3000	140
15	Ղամարլու .	—	582	2835	3350	—	430	100	530	15,8
16	Ղուրդուղուլի	—	600	485	1085	—	50	—	50	4,6
17	Ղափան . .	—	1393	4957	6350	—	4230	2879	7100	111,8
18	Մարտունի	—	184	242	426	—	830	2170	3000	704,2
19	Մեղրի . .	—	483	849	1302	—	810	630	1440	110,5
20	Մոլլա Գյոկչա	—	31	389	420	—	2200	2850	5050	1270
21	Նոր Բայազետ	—	267	333	600	—	900	2100	3000	500
22	Շամշադին .	—	529	4571	5100	—	1860	3250	5100	100
23	Սիսյան . .	—	794	5700	6600	—	3300	3430	6730	101,9
24	Ստեփանավ.	—	319	3681	4060	—	1650	2150	3800	95
25	Վեղի . . .	—	283	5417	5700	—	910	1220	2130	37,3
26	Վաղարշապ.	145	920	2085	3150	—	1130	900	2030	64,4
	Ընդամենը .	1260	12173	80517	93957	1520	50170	63480	115170	—

նական բամբակագործական շրջան, 50 հեկտար, Դամարլուն 3.350 հեկտարի դիմաց ցանելու յե 530 հեկտար, այսինքն՝ անցյալ տարվա աշնանացանի 15,8 %-ը, Վեղին 5.700 հեկտարի դիմաց ցանելու յե 2.130 հեկտար, 37,3 %։

Ինչու պլանով այսքան քիչ և նախատեսված աշնանացանը դաշտային բամբակագործական շրջաններում. դա բացատրվում է կուլտուրաների շրջանացումով՝ յուրաքանչյուր շրջանի պայմանների համապատասխան զարգացվելու յե համապատասխան կուլտուրա։ Հայտնի յե, որ դաշտավայրում շատ լավ աճում են տեխնիկական բույսերից՝ ծխախոտ, պտուղներից՝ ծիրան, տանձ, բանջարեղեններից—պամիդորը, բաղրիջանը ու տաքտեղը և վերջապես խաղողը։ Ինչու դաշտավայրերում նման թանգարժեք կուլտուրաներ չցանել, իսկ ցորենը, դարին՝ նախալեռնային և լեռնային գոտիում։

Որինակ՝ Ստեփանավանն անասնապահական շրջան է, Ղուրդուղուլին, Դամարլուն, Վեղին և Վաղարշապատը բացառապես բամբակի, իսկ Լենինականը—ճակնդեղի և հացահատիկի, ուրեմն այսպես էլ պետք է լինի—յուրաքանչյուր շրջանին համապատասխան կուլտուրա։

Բամբակագործական շրջանները չպետք է կրկնեն անցյալ աշնան սխալները, յերբ բամբակի նորմայի հետ միևնույն անտեսությանը կամ կոլտնտեսությանը տվել էին հացահատիկ ցանելու նորմա, մինչդեռ պետք է պիտանի հողամասերում ցանվեր միայն բամբակ։ Ընտրած սխալն ուղղվեց, սակայն բամբակի համար տրակտորով վարած հողերը նորից պետք յեղավ վարել, որի համար այս տարի բամբակի ցանքն ուշացավ։

Պայքարը բամբակի համար, պայքար է արտա-

սահմանյան կախումից ազատվելու համար, ամեն մի կոլտնտեսական, աշխատավոր, չքավոր ու միջակ գյուղացի պետք է պայքարի ամեն մի թիզ հողամասի համար։

Հենց բամբակի անկախության համար է, որ ցորենը բոլորովին չպետք է ցանվի դաշտավայրերում։ Այժմվանից պետք է հաշվի առնել բամբակի պիտանի բոլոր հողամասերը, իսկ ցորենին հատկացնել այն հողակտորները, որոնք ապահովված չեն ջրով և պիտանի չեն բամբակի համար։

Մի շարք շրջաններում էլ աշնանացանի տարածությունը չի լայնացրած կամ կրճատած է (Կոտայք, Ինչևան, Դարալագյազ) հողը ծխախոտի տակ առնելու համար գարնանը։

Աշնանացանի ծրագրում մի շարք շրջանները ցանքն ավելացնում են ինքնուրույն գարնանացան տեսակների, և դա շատ բնական է, քանի որ աշնանացան տեսակավոր սերմերը տալիս են յերկուսից մեկ ու կես անգամ ավելի բերք, քան գարնանացանի տեսակները։ Մյուս կողմից գարնան բոլոր աշխատանքներն իրար են գուգադիպում, դժվարվում է աշխատող ձեռքերի խիստ պահանջ։

Աշնանացան տեսակներ ցանելով, մենք թե բերքն ենք ավելացնում և թե մեղմում ենք աշխատող ձեռքերի պահանջը։

Հետագայում՝ Լենինականը, Ազրաբան, Բասարգեչարը, Ախտան, Նոր-Բայազետը և մի քանի այլ շրջաններ ամբողջովին ցանելու յեն աշնանացան տեսակավոր սերմեր։ Արդեն մի քանի շրջաններ «Ուկրաինկա» և «Կոտպերատորկա» ցանելու փորձ ունեն, չտես-

նված արդյունքներ է տացվում, յերբ այդ սերմերը ցանում են աշնանացանի ժամանակ։

Այս տարվա ծրագրով մի շարք շրջանների ցանքի տարածությունը մի քանի հարյուր տոկոսով ավելանալու յե, որինակ՝ Աղբաքան—570 %, Մարտունին—704,2 %, Աբարան—850 %, Մոլլա-Գյոկչան—964 %, Բասարգեչարը—321 %, Աշտարակը 140 %, Ախտան—392 %. և այլն։

Սրանք լոկ թվեր չեն, այլ պլաններ, վորոնք պետք է կիրառվեր կյանքում, իսկ դրանք կիրառելու պայմաններից մեկն այն է, վոր աշնանացանի պլանները հասցվի մինչև կոլտնտեսականը և չքավոր-միջակ տրնտեսությունը։

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ՊԱՀԱՆՋՆ ՑԵՎ. ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեսակավոր սերմերից հայտնի են «Ուկրայինկա» և «Կոոպերատորկա» տեսակները, վորոնք մեր նախալեռնային և լեռնային պայմաններում շատ լավ աճում և տալիս են հրաշալի արդյունքներ։ Մինչև վերջին տարիները նախալեռնային, նամանավանդ լեռնային բջանները մեծ մասամբ ցանում էին դարնանացանի տեսակներ, վորոնք տալիս էին քիչ բերք, այժմ փորձերը ցույց տվին, վոր «Ուկրայինկան» և «Կոոպերատորկան» այդ շրջաններում լավ են աճում և տալիս են ավելի բերք, ուրեմն ինչու չցանել տեսակավոր սերմ, այն էլ աշնանացանի ընթացքում, յերբ բնական պայմաններն ավելի նպաստավոր են և ունենք ավելի յերկար ժամանակ։ Հենց այս տեսակետից մեր կենտրոնական մարմիններն այս տարի վորոշել են մի շարք շրջաններ հայտարարել «Ուկրայինկայի» և ընդհանրապես տեսակավոր սերմեր ցանելու օրջաններ, իսկ այն օրջաններ, վորտեղ սերմի պակաս կա, պետք է ստանան այլ տեղերից, փոխանակելով իրենց ունեցածի հետ, իսկ հեռու ընկած շրջաններում այս տարի կատարվելու յեն փորձեր։

Հիմնականում ասան յերեք շրջան պետք է ցանեն տեսակավոր «Ուկրայինկա» տեսակի սերմ։ Այդ շրջանները, վոր 1930 թվին ցանել են 6.278 հեկտար, 31 թ. պետք է ցանեն 34.017 հեկտար, վոր ըստ սեկտորների կազմում է հետևյալ պատկերը՝

Տախտակ № 3

Թվական	Ն. տնտես.	Կոլտնտ.	Անհատ. տնտ.	Ընդամենը
1930 թ. *)	1105	1574	2383	6278
1931 թ.	1500	14240	18277	34017

*) Ըստ սեկտորների տեղեկությունները լրիվ չեն։

Վերև բերված աղյուսակից յերևում է վոր 541 %-ով այս աշնանացանի ընթացքում տեսակավոր սերմերի տարածությունը պետք է լայնանա, վորը խոշոր գրավական է բերքի բարձրացման համար,

1930 թվին կոլտնտեսություններում ցանել են՝ 1574 հեկտար, 1931 թվին ցանելու յեն՝—14.240 հեկտար, իսկ անհատական սեկտորը՝—ցանել է 2.863 հեկտար, պետք է այս տարի ցանի 15.557 հեկտար, այսինքն՝ 549 % ավելի անցյալ տարվա դիմաց։

Մի շարք շրջանների համար պարտադիր է ցանել

«ՈՒԿԲԱՅԻՆԿԱՅԻ» ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ 1930 Թ. ԵՎ 1931 Թ.

Ըստ շրջանների — Տախտակ № 4

№ №	ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ	1930 թ.*) Գարն. սերմեր.	1930 թ.*) Կար. սերմեր.	1930 թ.*) Անհատ. սերմեր.	1930 թ.*) Ընդամենը	1931 թ. Գարն. սերմեր.	1931 թ. Կար. սերմեր.	1931 թ. Անհատ. սերմեր.	1931 թ. Ընդամենը	%-ային աճման տեսակ
1	Ալեքսվերդի	—	—	—	—	—	50	50	100	—
2	Ա խ տ ա	—	74	63	137	—	1500	2737	4273	3092,7
3	Աղբաթա	—	91	120	211	—	500	100	1500	710,9
4	Աշտարակ	—	—	—	—	—	—	—	—	—
5	Աբարան	—	23,5	—	23,5	—	730	1270	2000	6896,6
6	Բասարգեչ.	475	92	186	753	1000	1500	2000	4500	597,6
7	Գ ո ր ի ս	—	—	—	—	—	—	—	—	—
8	Դարալագ.	—	—	—	—	—	—	—	—	—
9	Դիլիջան	—	—	—	424	—	1200	600	1800	424,5
10	Թ ա լ ի ն	—	—	—	—	—	—	—	—	—
11	Լենինական	630	1104	1896	3630	500	4100	2400	7000	192,8
12	Կոտայք	—	—	—	—	—	500	300	800	—
13	Ղամարլու	—	—	—	—	—	—	—	—	—
14	Ղուրդուղ.	—	—	—	—	—	—	—	—	—
15	Ղափան	—	—	—	—	—	—	—	—	—
16	Ղարաքիլ.	—	—	—	355	—	650	1050	1700	465,8
17	Ի ջ ե ա ն	—	—	—	—	—	—	—	—	—
18	Մարտունի	—	184	118	302	—	880	2170	3000	993,4
19	Մ ե ղ ր ի	—	—	—	—	—	—	—	—	—
20	Մոլա-Գյոկ.	—	—	—	111	—	1550	2500	4050	3648,6
21	Նոր-Բայազ.	—	—	—	230	—	900	2100	3000	1304,3
22	Շամշադին	—	—	—	—	—	—	—	—	—
23	Սևքար	—	—	—	—	—	—	—	—	—
24	Ստեփանավ.	—	—	—	86	—	230	100	330	383,7
25	Վաղարշապ.	—	—	—	—	—	—	—	—	—
26	Վ ե դ ի	—	—	—	—	—	—	—	—	—
	Ընդամենը՝	1105	1574	2333	6278	1500	14240	18277	34017	—

*) Ըստ սեկտորների տեղեկությունները լրիվ չեն։

«Ուկբայինկան», որինակ՝ Լենինական, Բասարգեչար Մոլա-Գյոկչա, Աղբաթա, Նոր-Բայազետ, Մարտունի, Ախտա, Աղարան և Ղարաքիլիսա։ Ըստ Հողժողկոմատի մշակած պլանի 13 շրջաններին «Ուկբայինկա» սերմացուն բավարարում է, վորովհետև Լենինականը և Նոր-Բայազետն տվել են բավականի հաջող սերմացու, իսկ պակասը լրացվում է դրսից։ Այնտեղ, վորտեղ նոր է այդ կուլտուրան մտցվում, որինակ՝ Ստեփանավան, Ալեքսվերդի և Մոլա-Գյոկչա, խիստ կարիք է զգացվում տանել ագրոնոմիական բացատրական աշխատանք, ապացուցել տեսակավոր սերմի առավելությունը՝ տեղականի նկատմամբ, և տրված պլաններն ինչ դնով էլ լինի կատարել։

Նախորդ էջում բերված տախտակից պարզ լերևվում է տեսակավոր սերմերի աշնանացանը տարածության ամուսը։ Տեսակավոր սերմերի ցանքը նույնպես ավելանում է։ Նախատեսված «Ուկբայինկայի» տարածության դիմաց չկատ է ցանվի տեղական սերմի վոչ մի հատիկ։

Վեց շրջաններին տրված է 150 հեկտար տավուտի և 20 հեկտար աշնանացան վիկայի պլան։

Ըստ շրջանների ցանվելու լ՝

1. Վաղարշապատ՝ 30 հեկտար տավուտ
2. Վեդին . . . . 10 » »
3. Կոտայք . . . 20 » » Վիկա 20 հեկտ.
4. Ղամարլուն . 30 » »
5. Ղուրդուղուլին 50 » »
6. Մեղրին . . . 10 » »

Ընդամենը՝ 150 հ. տավուտ 20 հ. վիկա։

Առվույտը կարելի է ցանել թե գարնան և թե աշնանը, բայց փորձերը ցույց են տվել, որ աշնան ցանած առվույտը վոչնչով պակաս բերք չի տալիս գարնան ցանած առվույտից։

Պետք է միայն սերմորայք ձեռք բերել և անդամ այս տարվա մնացած սերմից ուղարկել այն շրջանները, վորտեղից տրված է առվույտ ցանելու պլան։

Աշնան վիկան ցանվելու է միայն Կոտայքի շրջանում, վորտեղ կա արդեն մի քանի տարվա փորձ, և վորտեղ վիկայի առավելությունն, վորպես հողի բերքատվությունը բարձրացնող մի միջոցի և վորպես առատ կերի, ավելի լավ է յուրացված կոլտնտեսությունների և չքավոր ու միջակ տնտեսությունների կողմից։

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՍԵՐՄԱՑՈՒՑԻ ՊԱՀԱՆՋԸ

115.170 հեկտար ցանքի համար պլանով նախատեսվում է սերմացու հետևյալ չափերով.—

Թորհրդային տնտեսությունների համար հարկավոր է 2.128 ցենտներ, կոլտնտեսություններին—70.111 ցենտներ, անհատական տնտեսություններին 95.220 ցենտներ, ընդամենը՝ 157.459 ցենտներ, վորից «Ուկրայինկա» տեսակավոր սերմ՝ խորհ. տնտեսությունների համար—2.100 ցենտներ, կոլտնտեսությունների համար 19.936 ցենտներ, և անհատական տնտեսությունների համար—27.416 ցենտներ. ընդամենը՝—49,932 ցենտներ։

Նախատեսված սերմացուն տեղերը հասցնելու համար պետք է տեսակավոր սերմերը ժամանակին ծեծվի, կալվի ու առանձնացվի, և պատրաստ լինի ցանելու համար։ Կոլտնտեսկենտրոնը, Շրջկոմբինատները

Սերմի պահանջը ըստ շրջանների

Տախտակ № 5

№№	Շրջանների անունները	Սերմի պահանջը ցենտներով							
		Ցորեն				«Ուկրայինկա» այդ հաշվում			
		Խորհ. տնտես.	Կոլ. տնտես.	Անհատ. տնտես.	Ընդամենը	Խորհ. տնտես.	Կոլ. տնտես.	Անհատ. տնտես.	Ընդամենը
1	Ալավերդի	—	4130	7575	11705	—	70	75	145
2	Ախտա	—	2520	5550	8070	—	2100	4106	6206
3	Աղջաբա	—	700	1500	2200	—	700	1500	2200
4	Աշտարակ	—	6020	5550	11570	—	—	—	—
5	Աբարան	—	1022	2985	4007	—	1022	1905	2927
6	Բասարգեչ.	1400	2200	3000	6500	1400	2100	300	6500
7	Գորիս	—	6580	6000	12580	—	—	—	—
8	Դարալագ.	—	2254	6285	8539	—	—	—	—
9	Դիլիջան	—	2170	4350	6520	—	1680	900	2580
10	Թալին	—	1260	4350	5610	—	—	—	—
11	Իջևան	—	4200	3300	7500	—	—	—	—
12	Լենինական	700	5740	3600	10040	700	5740	3600	10040
13	Կոտայք	28	5409	6195	11632	—	700	450	1150
14	Ղարաքիլսա	—	1400	3000	4400	—	910	1575	2485
15	Ղամարլու	—	566	150	716	—	—	—	—
16	Ղուրդուղ.	—	70	—	70	—	—	—	—
17	Մարտունի	—	1162	3255	4417	—	1162	3255	4417
18	Մեղրի	—	1122	945	2067	—	—	—	—
19	Մոլլայոլի.	—	2170	3750	5920	—	2170	3750	5920
20	Նոր-Բայազ.	—	1260	3150	4410	—	1260	3150	4410
21	Շամշադին	—	2590	4875	7465	—	—	—	—
22	Սիսիան	—	4620	5145	9765	—	—	—	—
23	Սանփանավ.	—	2310	3225	5535	—	322	150	472
24	Վաղարշ.	—	1546	1350	2896	—	—	—	—
25	Վեդիբասար	—	1262	1830	3092	—	—	—	—
26	Դափան	—	5928	4305	10233	—	—	—	—
	Ընդամենը՝	2128	70111	95220	167459	2100	19936	27416	49452

Գ.Ս.Տ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ—СССР
հտ. А. Масикяна
Ա. ՄԱՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15832 — 52

նները պետք է առանձին ուշադրություն դարձնեն սերմացվի կուտակման, սերմֆոնդերի ստեղծման վրա։

Սերմացուն պետք է ավելի լավ հասած արտից քաղած լինի, անձրևների չնկած, չղեղնած, չկարկտահարված և առհասարակ ախտից։

Այդպիսի սերմերը պետք է ընտրել վորպես սերմացու, զտել և առանձնացնել աշնանացանի համար։

Ամենադլխավոր աշխատանքը, դա տեսակավոր սերմերի «Ուկրայինկա»-ի և «Կոոպերատորկա»-ի ամբողջ բերքն անձնանմխելի դարձնելն է, վորը պետք է հատկացվի 1931 թվի աշնանացանքի համար։

Տեսակավոր սերմֆոնդի ընդհանուր չափը սահմանվում է 49,932 ցենտներ, վորը գոյանալու յե այս տարվա բերքից՝ 48.000 ցենտներ, պետական տեսակավոր սերմֆոնդից 1.400 ցենտներ, վոր մնացել է անցյալ տարվանից և վերջապես պետք է ներմուծվի 3.500 ցենտներ։

Մի քանի շրջանները, որինակ՝ Ախտան, Աղբաքան, Աբարանը, Բասարգեչարը, Կոտայքը, Մարտունին, Մոլլա-Գլուխչան, Նոր-Բայազետը և Դիլիջանը տեսակավոր սերմացուով չեն կարող ծածկել իրենց պահանջը, այդ իսկ պատճառով հարկավոր է Լենինականի և այլ շրջանների ավելորդ սերմացուն տեղափոխել նշված շրջանները։ Պետք է տեղափոխվի 23.000 ցենտներ տեսակավոր սերմացու։

Տեսակավոր սերմը ժամանակին հավաքելու համար հարկավոր է, վոր տեղական ցորենի պաշարը փոխանակվի տեսակավոր սերմի հետ. Սարուշիլերը և Հայաստանանապահական Մեռելոյունը պարտավոր են ժամանակին ընթացք տալու այս աշխատանքներին։

Տեսակավոր սերմը առաջին հերթին պետք է հաս-

«ՈՒԿՐԱՅԻՆԿԱ» ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 1931 Թ. ԲԱՇԽՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԳԻ

Տեղեկագիր № 6

№	Շրջանները	1931 թ. «Ուկրայինկա»-ի ներքո ցանքի ենթակա հողատարածությունը	1930 թ. հունվարի 1-ին տեսակավոր սերմի հասանելի քանակությունը	1931 թ. «Ուկրայինկա»-ի ներքո ցանքի ենթակա հողատարածությունը	«Ուկրայինկա» տեսակավոր սերմի ծածկի ենթակա հողատարածությունը												
					Դիլիջան	Գանձակ	Գյոկչա	Գորիս	Զանգեզուր	Լենինական	Նոր-Բայազետ	Սևանի	Վարդենիս	Ղազարապատ	Ղարաբաղ	Ղարաքիլիսա	Ընդամենը
1	Ախտալ	137	1,050	4,237	6,350	—	5,300	3,300	—	—	—	—	—	2,000	5,300	5,300	
2	Աղբաքան	221	1,500	1,500	2,250	—	750	750	—	—	—	—	—	—	750	750	
3	Աբարան	28,5	180	2,000	3,000	—	2,820	2,820	—	—	—	—	—	—	3,820	3,820	
4	Բասարգեչար	73	5,000	4,500	6,750	—	1,750	—	—	—	—	—	—	1,750	1,750	1,750	
5	Դիլիջան	424	2,120	1,800	2,700	—	680	—	—	—	—	—	—	620	620	620	
6	Կոտայք	—	—	800	1,200	—	1,200	—	—	—	—	—	—	1,200	1,200	1,200	
7	Գյոկչա	35	160	100	150	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
8	Լենինական	3,630	25,400	7,000	10,500	14,900	—	—	—	—	—	—	—	—	—	—	
9	Ղարաբաղ	365	2,550	1,700	2,500	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
10	Մարտունի	302	2,165	3,000	4,500	—	2,335	905	—	—	—	—	—	1430	2,335	2,335	
11	Մոլլա-Գլուխչան	111	750	4,050	6,075	—	5,325	3,525	400	1,400	—	—	—	—	5,325	5,325	
12	Նոր-Բայազետ	230	1,680	3,000	4,500	—	2,820	1,320	—	—	—	—	—	1,500	2,820	2,820	
13	Սևանի	86	480	330	500	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	Ընդամենը	6,312	47,775	34,017	51,025	14,900	22,940	12,620	400	1,400	8,500	22,920					

ցնել խորհ. տնտեսություններին և կոլտնտեսություններին, նամանավանդ, այն կոլտնտեսություններին, որոնք սերմաբուծական թեքում են ունենալու։

Սերմաբուծությունը բավականին լուրջ գործ է։ Կոլտնտեսությունը և Շրջկոլտնտեսությունները շատ խոշոր ուշադրություն պետք է դարձնեն սեփական սերմ պատրաստող կոլտնտեսությունների աշխատանքների վրա, ուժեղացնեն հրահանգչական և կենդանի ղեկավարությունը։

Վերև բերված տախտակից պարզ է, թե ինչպես և բաշխվում «Ուկրայինկան» ըստ շրջանների և որտեղից են լրացնելու իրենց պակասն այն շրջանները, որոնք այս տարի չունեն համապատասխան չափով սերմացու։

1. Լենինականի ավելցուկը կազմում է 14.900 ցենտներ, որը կծածկի մեկ շրջանի պակասորդը, պետք է արագորեն փոխադրել սերմացուն և անմիջապես հասցնեն գյուղը։

2. 400 ցենտներ, որ մնացել է 1930 թվի ցանքից, պետք է հատկացնել Մոլոչ-Գյոկչայի շրջանին, — քանի որ սերմը գտնվում է հենց այդ շրջանի կենտրոնում.

3. Սայուզխլեբի Լենինականի պահեստում կա 1.400 ցենտներ «Կոոպերատորկա» սերմացու, որը նույնպես պետք է հատկացնել Մոլոչ Գյոկչային.

4. Նախատեսված է ներմուծել 8.500 ցենտներ տեսակավոր սերմ՝ «Ուկրայինկա», որից 500 ցենտներ պետք է տրվի Բասարգեչարի խորհտնտեսության։ Այսպիսով վերև բերված 12 շրջանների պահանջը հիմնովին կբավարարվի, եթե ժամանակին կատարվեն վերագրաս մարմինների որոշումները։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԵՐՄՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Մեր նպատակն է նաև կանխել գյուղատնտեսության բոլոր հետագա այն տրդիլքները, որոնք կարող են առաջացնել ՄՏՍ-ում կամ ադեմ, որի համար և կազմակերպում են ապահովագրական ու պահեստի սերմֆոնդեր։ Գյուղատնտեսությունը դեռևս հաճախ ենթակա է բնության ուժերին, բնական տարերքները շատ են, նամանավանդ գյուղատնտեսության ասպարեզում, ամեն տարի տեղի է ունենում ցրտահարություն, կարկտահարություն, միջատներից և վնասակար պատահարներից ցանքսի վորոշ տոկոսը փչանում է, և այլն։

Հաճախ հնարավոր է կրկին ցանել՝ հասցրած ՄՏՍ-ները ծածկելու համար։

Յեթե մենք չունենանք պատրաստի սերմացու, չենք կարող կռվել բնական պատահարների դեմ, հենց այս պատճառով նախատեսված է ցանվելիք սերմի 15 տոկոսը, այսինքն՝ 24.800 ցենտներ, հատկացնել ապահովագրական անձեռնմխելի ֆոնդին։ Ամեն մի կոլտնտեսություն և ամեն մի գյուղ սերմացույցից բացի պետք է ունենա նման ֆոնդեր։ Այդ ապահովագրական ֆոնդը յերբեք չի կարելի ուրիշ նպատակի ծախսել։

Հողժողկոմատի կողմից տրված դիֆերենցիալ (շերտավորյալ) ապահովագրական սերմ ֆոնդը պետք հասցվի յուրաքանչյուր կոլտնտեսության, անհատական, չքավոր ու միջակ գյուղացուն, և կայուն առաջարկներ տրվի կուլակ ունեոր տնտեսություններին։ Վոչ մի տեսություն առանց ապահովագրական սերմֆոնդի, սա յե բայշեվիկյան աճեցեցացնի լոզունգներից մեկը։

Ապահովագրական սերմֆոնդ ստեղծելու աշխատանքները պետք է ավարտել վոչ ուշ հոկտեմբերի 15-ից։

Փոխարինաբար տրված սերմացուն պետք է գտնել ժամանակին։ Ամեն մի կոլտնտեսական և անհատ, չքավոր և միջակ գյուղացին պետք է իմանա, վոր փոխարինաբար տված սերմացուն պետք է նա վերադարձնի նշանակված ժամկետին և աջակցի նրա հաջող գտնմանն։ Անհրաժեշտ է նաև 1932 թվի գարնանացանի համար սերմֆոնդ ստեղծել, դրել այն և պահել պահեստներում և ավարտել նրա գտնումը մինչև նոյեմբերի 10-ը։ Պետք է հետևել, վոր վոչ մի կիլո սերմֆոնդից չփչանա։

Սերմֆոնդի ստեղծման շուրջը պետք է ծավալել բացատրական լայն կամպանիա, հիշելով, վոր աշնանացանի մարտական պլանների կատարումը և գերակատարումը կախված է նաև սերմֆոնդի կատարման պլանների հաջող կատարումից։

Ներքևում բերում ենք սերմֆոնդերի կատարման մասին Հողժողկոմատի մշակած պլանը, ըստ շրջանների։

1. Ինչպես տեսնում ենք վերև բերված տախտակից, կոլտնտեսություններում ստեղծվելու յե սերմֆոնդ ընդամենը 70.111 ցենտներ.

Կոլտնտեսությունները նախքան բերքի բաշխելը, պետք է սերմֆոնդին հատկացնեն իրենց տրված պլանին համապատասխանող չափով սերմացու, և ապա մնացածը բաժանեն, պետք է այնպես անել, վոր մաքուր, լավ և շուտ ծեծած, լավ հասած սերմերը հատկացվի սերմացվի ֆոնդին։

2. Ապահովագրական սերմֆոնդը կազմում է ամբողջ ցանվելիք սերմի 15 %-ը։

Տախտակ № 7

№ №	ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1931 թ. Ամբողջ սերմի պահանջը ցենտներով	1931 թ. Սերմֆոնդ. բանակը կոլտնտեսություններում	Աշնան Ապահով. սերմֆոնդի քանակը կոլտնտես. և անհատ. 15%	1932 թ. Ամբողջ սերմի պահանջը ցենտներ.	Գարնան Ապահովագր. ֆոնդի քանակ. 15%
1	Ալպահվերդի	11,705	4,130	1,756	6,018	903
2	Ախտա . . .	8,070	2,520	1,211	33,098	4,965
3	Աղբաբա . .	2.200	700	330	23,229	3,484
4	Աշտարակ .	11,570	6,020	1,736	7,409	1,111
5	Աբարան . .	4,007	1,022	601	35,178	5.277
6	Բասարգեչար	6,500	2,100	975	28,346	4,252
7	Գորիս . . .	12,580	6,580	1,887	7,352	1.103
8	Դարալագյազ	8,539	2,254	1,231	23,456	3,518
9	Դիլիջան . .	6,520	2,174	978	10,362	1,554
10	Լենինական	10,040	5,740	1,506	39,537	5,946
11	Թալին . . .	5,610	1,260	842	9,634	1,453
12	Իջևան . .	7,500	4,300	1,125	3,131	470
13	Կոտայք . .	11,632	5,409	1,745	12,105	1,816
14	Ղարաքիլիսա	4,400	1,400	660	11,680	1,752
15	Ղամարլու .	716	566	107	—	—
16	Ղափան . .	10,233	5,928	1,535	7,344	1,102
17	Ղուրդուլուլի	70	70	11	—	—
18	Մեղրի . .	2,032	1,122	310	2,471	371
19	Մարտունի	4,417	1,162	663	20,899	3,135
20	Մոլլագյոզչա	5,920	2,170	888	33,667	5,050
21	Նոր-Բայազ.	4,410	1,260	661	17,008	2,551
22	Շամշադին .	7,465	2,590	1,120	4,902	735
23	Սիսիան . .	9,765	4,620	1,465	11,677	1,752
24	Ստեփանավ.	5,535	2,310	830	6,317	948
25	Վաղաբյուրդ.	2,896	1,546	424	—	—
26	Վեդիբասար	3,097	1,262	464	11,170	1,676
	Ընդամենը՝	16,7459	70,111	25,121	366,140	54,924.

Ամեն մի հատիկ սերմացուն, վոր նախորոք պահվում է վորոշ նպատակի համար՝ իրեն կարգարացնի։ Շատերը կարծում են, թե կարիք չկա ապահովագրական և պահեստի սերմֆոնդ ստեղծել, վոր բնական պատահարի դեպքում պետությունն իր ամբարները բաց կանի և համապատասխան չափով սերմացու բաց կթողնի։ Իհարկե պետությունը դժբախտության դեպքում իր անմիջական աջակցությունը ցույց կտա, սակայն միայն պետական միջոցներով հնարավոր չի լուծել այդ դժվարին հարցը։

1932 թ. ապահովագրական ֆոնդին հատկացվեու չի գարնան ցանվող սերմացուի 15—% ը, վորն անում է 51.924 ցենտներ։

Ստեղծված ֆոնդի սերմացուն պետք է պահվի հատուկ պահեստներում։ Պահեստները պետք է նախորոք դեզինֆեկցիայի յենթարկել լավ փակել բոլոր անցքերը, ընտրել չոր պահեստներ, ձեռքից ու վոտքից հեռու տեղում, սերմացուն պատահարներից հեռու պահելու համար։

Սերմի խնամքի մասին պետք է շրջանային ագրոնոմներն առանձին բացատրական աշխատանք կատարեն և կենդանի կերպով ղեկավարեն այդ գործը։ Նշված քանակությամբ սերմացուն պետք է կազմակերպել կենտրոնական մարմիններից տրված ժամկետից վաղ ուշ։

Բամբակացան շրջանները, բացի Վեղի—Բասարից, գարնանացանի համար սերմֆոնդ չեն ստեղծում, և դա շատ հասկանալի է, քանի վոր գարնանացանի ընթացքում Ճնցած լերնք շրջանները՝ Վաղարշապատ։ Դամբլուն և Դարբուդուլին ցանելու յեն միայն տեխնիքական կուլտուրաներ, առաջին հերթին ապահովելով բամբակի համար 64.000 հեկտար պիտանի և ջրովի հող, Ճնցած հողերը հատկացվելու յեն այլ տեխնիքական կուլտուրաների, այնպես վոր այդ շրջանները սերմֆոնդ կազմակերպելու փոխարեն, պետք է նախապատրաստվեն գարնան բամբակի ցանքի համար, այսինքն վարեն, վոռոգման ցանցը կանոնավորեն, բոլոր պիտանի չիմանները վարեն առաջին հերթին տրակտորով, իսկ խոզանները լծկանների կալոններով։

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Ագրոձեռնարկումները ասնանացանի կամպանիայի հիմնական խնդիրներից են։ Ագրոձեռնարկումներն այն միջոցառումներն են, վորոնք հետապնդում են մի հիմնական նպատակի՝ ստանալ բերքի բարձր բանակ ու վորակ։ Կանգ առնենք ագրոձեռնարկումների հիմնական լոթ տեսակների վրա։ 1. Վաղ ցել, 2. Շարքացան, 3. Սերմերի զտում, 4. Սերմերի ախտահանում, 5. Տեսակավոր սերմերի գործածություն, (վորի մասին խոսել ենք վերևում) 6. Նոր հողակտորների մշակում, և վերջապես 7. Ուշ տշնան աբտթը։

1. Վաղ ցելը. աշնանացանին պետք է հատկացնել բոլոր կատարված ցելերը, քանի վոր չորային անջրդի շրջաններում ցելն ունի իր հսկայական նշանակությունը չորության դեմ կռվելու, սննդանյութերը կուտակելու և հողի մեջ կենսական կազմվածք ստեղծելու տեսակետից, իսկ այս բոլոր հանգամանքները նպաստում են բերքի բարձրացմանը։ Մյուս կողմից, ըստ նախատեսված պլանի՝ պետք է առաջին հերթին վարվեն աշնանացանին հատկացվելիք հողեր, (այդ իհարկե չի վերաբերում բամբակագործական շրջաններին)։

2. Շարքացանն ունի այն առավելությունը, որ յեղանակով կատարված ցանքով նախ ղեկասում է ցանվող սերմի չափը 20-ից 25 %-ով, սերմերը ողի, ջրի, տաքության, արևի, խոնավության տեսակետից նպաստավոր պայմաններում են աճում, մի խոսքով՝ նպաստավոր կլիմայական և հողային սննդատու պայմաններ են ստեղծվում։ Տնտեսության աշխատանքները մեքենայացվում են. մեկ հեկտար ձիու շարքացանով մի սրում կարելի է ցանել յերեք հեկտար, իսկ տրակտորով օրական 12 հեկտար, վորով աշխատավոր ձեռքերի պահանջը կրճատվում է և վերջապես շարքացանի դեպքում մենք ավելացնում ենք բերքը 15-ից 20%-։ Ցեթե հաշվելու լինենք պլանով նախատեսված 60.000 հեկտար շարքացանի տված այդ ոգուտը, կստացվի 120.000 ցենտներից մինչև 90.000 ցենտներ հավելյալ բերք, դրան դումարելով սերմի տնտեսումը, (շաղացանի դեպքում մի հեկտարին գնում է 200-ից մինչև 220 կիլոգրամ, իսկ շարքացանի դեպքում 125-ից—130 կիլոգրամ), կունենանք 45—54 հազար ցենտներ խնայված սերմ, վոր իսկույն տեղը պետք է կորչեր հողի մեջ։ Այսպիսով շարքացանի շնորհիվ ընդամենը կստացվի 130.000-ից 170.000 ցենտներ սերմացվի տնտեսում։

Հայաստանի տերկրորդ աշնանացանին պետք է կատարվի 60.000 հեկտար շարքացան, վորը կազմում է ամբողջ ցանվելիք տարածության 52 ու կես %-ը։ Ըստ սեկտորների՝ շարքացան կատարելու յեն՝ Խորտնտեսություններ—1.500 հեկտար, Կոլտնտեսություններ՝ — 37.000 հեկտար, անհատ տնտեսություններ 21.000 հեկտար։ Ամբողջ շարքացանի 61.6 %-ը կատարվելու յե կոլտնտեսությունների միջոցով, 35,9%

անհատական տնտեսությունների, իսկ 2,5 % Խորտնտեսութ., այսպիսով մենք նախապատրաստվում ենք 1932 թվին շարքացան անել 100 %-ով։ Շարքացանի պլանը պետք է ժամանից հասցնել կոլտնտեսակներին, չքավոր ու միջակ անհատական տնտեսությանը այն հաշվով, վոր վոչ մի տեսակավոր սերմի հատիկ առանց շարքացանի գետին չընկնի։

Շարքացանները պետք է վերանորոգել ու պատրաստ պահել։ 11 խոփիկ ունեցող ամեն մի շարքացանին պետք է տալ կոլտնտեսություններում 60 հեկտար նորմա սեզոնի ընթացքում, իսկ անհատ տնտեսություններին՝ 44 հեկտար։ Տրակտորների համար նախատեսնել 150 հեկտար սեզոնի ընթացքում։

Ձեռքի տակ յեղած մեքենաների թիվը սահմանափակ է, սակայն շարքացանները ռացիոնալ կերպով ոգտագործելու դեպքում, այսինքն նորմալ բեռնվածություն տալով, մենք դեռ ավելցուկ կունենանք։ Անհատական սեկտորում շարքացան քիչ է նախատեսված, վորովհետև նրանց հողակտորները փոքր են, և հնարավորություն չեն տալիս մեքենային լրիվ ծանրաբեռնվածություն տալ, քանի վոր թմբերն ու միջնակները թշնամի յեն մեքենային, ավելի լավ է, անհատական սեկտորում ցանել տասդյակներով, վորով հնարավորություն կստեղծվի նախատեսված 44 հեկտարից ավելին ցանել, շարքացաններին տալով լրիվ բեռնվածություն։

Կոլեկտիվ տնտեսություններում նորման ավելի բարձր է—60 հեկտար, վորի կատարման համար պետք է շարքացաններն ամրացնել ըստ տառնաների, զոնաների յեվ ըստ գյուղերի, վորպեսզի ավելորդ աշխատանք

չկատարվի, մեքենան չպարտվի մի հողակտորից մյուս հողակտորը, մի սառնայից մյուս սառնա, և ամեն մի բրիգադ ունենա իր սառնայում շարքացան և նա պատասխանատու լինի նրա աշխատանքի համար։

Տրակտորի շարքացանը սեղոնի ընթացքում պետք է ցանի 150 հեկտար, լեթե սեղոնը հաշվելու լինենք մինիմում 20 որ, որեկան ընկնում է 7 ու կես հեկտար, վորը 24 շարքանի շարքացանի համար մինիմում նորման է։ Տրակտորը 150 հեկտարից պակաս չպետք է ցանի, ամեն մի ղեկակալ, (ռուլևիկ) պետք է իրա վրա դրած պլանը կատարի և գերակատարի։

Սերմի զտումն այս տարի հայտարարվում է պարտադիր, վոչ մի հատիկ առանց զտելու չդրեթք է հուլին տալ։ Առողջ սերմը մենք հողի մեջ ցցելով, նրանից կստանանք առողջ սերունդ, իսկ չզտելու դեպքում սերմի 25%-ը խլուր տեղը կորչում է, ջարդված, մանր լինելու պատճառով, և վերջապես մենք աղտոտվում ենք մոլախոտերից, վորոնք ուղղակի խեղդում են կուլտուրական բույսերին, դրա համար սերմազտիչն այնպես է կառուցված, վոր պտում է բոլոր այն սերմերը՝ գլուլ, դառնիչք և այլն, վորոնք նպաստում են վնասակիչ հիվանդությունների (հատկապես մրիկի) տարածմանը։

Սերմը զտելով մենք կստանանք բերքի հավելում 10—15%։ լեթե ցանելու լինենք 115.170 հեկտար ցանք, ամեն մի հեկտարից կստանանք միմիայն սերմ զտելու միջոցով մեկ ու կեսից 2 ցենտներ ավել բերք, դա կկազմի 172.755—239.340 ցենտներ։

Զտման ժամկետը լեռնային շրջանների աշնանացանի համար սահմանված եր մինչև սեպտեմբերի 1-ը։

իսկ նախալեռնային ու դաշտային շրջաններում մինչև հոկտեմբերի 1-ը։

Աշնանացանի սերմը զտելուց հետո, պետք է նախապատրաստել նաև գարնանացանի սերմացուի զբաղումը, այն հաշվով, վոր գարնան սերմացուն 100%-ով զտվի գարնանացանի ընթացքում, քանի վոր գարնանը դժվարանում է յերթևեկությունը, ճանապարհները փչանում են, ցուրտը և մի շարք հանգամանքները չեն թույլ տալիս գարնանացանի ընթացքում սերմացուն հաջող զտել։ Դիրեկտիվ մարմինների վորոշմամբ գարնանացանի սերմը պետք է 100%-ով զտվի, վերջացվի մինչև նոյեմբերի 15-ը, այն հաշվով, վոր բոլոր սերմազտիչներն ունենան լրիվ բեռնվածություն, այսինքն ամեն մի սերմազտիչ սեղոնի ընթացքում զտելու չե 800 ցենտներ սերմ։

Մեքենատրակտորային կայանները մեծ անելիք ունեն շարքացանների և սերմազտիչների ու առհասարակ գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման, բանի դցելու գործում, նրանց սժանդակությունն ու ղեկավարությունն անհրաժեշտ է այս կարևոր գործին։

Պահեստի մասերի հարցը նույնպես շատ կարևոր է, վորովհետև հասարակ պատճառով լերբեմն մեքենաները կանգնում են, պահեստի մասեր ձեռք բերել ու տեղերն ուղարկելը կենսական խնդիր է, ամեն պտուտակի պակասը պարպուրդ է առաջ բերելու, ուրեմն նախորոք պետք է կանխել այդ։

Սերմի ախտահանում այս աշնանացանի ընթացքում պետք է կատարվի 100%-ով, պետք է կազմակերպվի սերմի մասսայական ախտահանում, պայքար մրիկի և այլ սնկային հիվանդությունների դեմ, վոր նշանակում է նպաստել բերքի ավելացմանը։

Ամեն տարի մենք կորցնում ենք հարյուրավոր ցենտներ քերք միայն մրիկ հիվանդության պատճառով, շատ հաճախ լեռնային և նախալեռնային ցորենի ցանքսերի 20—50 %-ը վարակվում և մրիկով։ Այս տարը բուժել հնար է, դրա համար նախազգուշացման միջոց կա, դա սերմ թունավորելն է զանազան թույներով՝ կապույտ քարով, կամ ֆորմալինի լուծույթով։

Ախտահանման համար դեղորայք ու մեքենաներ ձեռք բերելն ու ապահովելն, ախտահանման գործի կազմակերպումն ընկնում է Վ. Պ. Ը.-յան վրա, վորի ապարատը պետք է դառնա ճկուն, կարողանա ղեկավարել այդ մասնական գործը, թույլ չտալ ինքնահոս տիրի, ինչպես մինչև այժմ լեղել է։

ՎԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բայլեվիկյան յերկրորդ աշնանացանի պլանները իրականացնելու համար, հարկավոր է աշնան վարի վրա դարձնել ամենախոշոր ուշադրությունը, քանի վոր վարի ժամանակին ու վորակով լինելու դեպքում ապահովում ենք ավելի բարձր բերքատվություն։ Վարի ճիշտ կազմակերպման ու ժամանակին ավարտելու պատասխանատվությունն ընկնում է տեղական կազմակերպությունների վրա։ Պետք է կազմակերպել ձիյան, յեզան կալոնները, և տրակտորային բրիգադներ, հսկել վոր վարը կատարվի վորակով, քանի վոր շատ անգամ հողի ներքևից և վերևից կամ մեջտեղից թողնում են խամ, կամ թե վարում են այնպես, վոր հողի յերեսը հաղիվ չանդրադառնում են, մինչդեռ վարի խորությունը 18—20 սանտիմետրից պակաս չպետք է լինի, պետք է վերացնել կոլտնտեսությունների հողակտորների միջից վաղուց մնացած խամ տեղերը, թմբերը, միջնակները, վորոնք խանգարում են մեքենայի անց ու դարձին, իսկ անհատական տնտեսությունների հողամասերը վարել ու ցանել տասնյակներով, վորով կապահովենք ժամանակին ավարտելու ցանքսը։

Վարը պետք է վերջացնել լեռնային և նախալեռնային շրջաններում մինչև նոյեմբերի 10-ը, իսկ դաշտային շրջաններում մինչև դեկտեմբերի 1-ը։

Բոլոր աշխատանքներն այնպես պետք է կազմակերպել, վորպեսզի նախատեսված 160.000 հեկտար աշնան վարը դարձնացանի համար վերջանա նշված ժամկետին։

Բայլեվիկյան այս աշնանացանի պլանի մեջ մտնում է վարել ու նախապատրաստել։

33.000 հեկտար բամբակի դարձնացանի համար։ Դա նրա համար է կատարվում, վորպեսզի ապահովենք բերքատվությունը, 2-րդ դարձնացանի ժամանակ աշխատող ձեռքերի պակասը մեղմենք, քանի վոր դարձնացանի ընթացքում աշխատանքներն իրար վրա յեն կուտակվում և խանգարում են դարձնացանի հաջող ընթացքին։ Ցեթե այժմվանից չկազմակերպենք վարը, կատեղծվի 1931 թվի բամբակի ցանքսի պատմությունը, յերբ դեռ մայիսի 10-ին վար եյինք անում, մինչդեռ մայիսի 10-ին պետք է վերջանար բամբակի ցանքը 100 %-ով։

Մեքենատրակտորային կայաններն այնպես պետք է կազմակերպեն իրենց աշխատանքները վարի ասպարիզում, վորպեսզի որեկան 21 ժամվա անընդհատ վար կատարվի, դրա համար տրակտորների վերազորզումը պետք է կատարել դաշտում, ուշնեցել լույսի բա-

լոր հարմարությունները՝ կարբիս, ապարաս, Ֆակելներ։ Զնայած 33.000 հեկտարի՝ վարի մեծ մասն ընկնում է տրակտորների վրա, իսկ փոքր մասն ձիյան և յեզան կալոնների վրա, այդ կալոնների կազմակերպումը չպետք է թողնել անցյալ տարվա և 31 թվի պես ինքնահոսի (ինչպես Վաղարշապատի, Ղուրդուղուլու շրջանները կատարեցին, թերագնահատելով լծկանների ուժը, ամեն ինչ թողնելով մեքենատրակտորային կալանները)։ Պետք է վերջ տալ լծկանների ոպպորտունիստական թերագնահատմանը, կազմակերպել և ղեկավարել ամբողջ քաշող ուժը, այնպես որ վոչ մի ձի և յեզ կալոնաներից դուրս չմնա, պետք է այժմվանից նրանց տալ կոնկրետ որագրային պլաններ ու պահանջել տրված պլանների կատարումը։

Բամբակի 53,000 հեկտարի պլանի կատարման նախապատրաստական աշխատանքներից ամենակարևորը 33.000 հեկտար աշնան վարի հաջող կազմակերպումն է։ Վոչ մի թիզ պակաս, այլ ավելին։

33.000 Հեկտար բամբակենուն հատկացվելիք աշնան վարը բայլեվիկյան աշնանացանի մարտական յոզունգն է։

Պլանով նախատեսված է նաև աշնան վար կատարել հետևյալ կալտուրաների համար։

Շաքարի ճակնդեղի համար — 2.800 հեկտար. այլ տեխնիքական կուլտուրաների համար — ծխախոտ և այլն՝ 5.000 հեկտար։ Գարնանացան խոտաբույսերի համար — 20.000 հեկտար։ Արմատապտուղների համար — 3. 000 հեկտար, սիլոսային բույսերի համար — 10.000 հեկտար, այլ կուլտուրաների համար — 14.000 հեկտար, և վերջապես գարնանացան հացահատիկների համար 68.700 հեկտար։

Աշնանացանի հետ սերտ կապ ունեցող աշնան

վարի կազմակերպումը, այսինքն 160.000 հեկտար վարել ու պատրաստել գարնանացանի համար, դա նշանակում է մարտական պատրաստակոնությամբ դիմավորել 32 թվի գարնանացանին։

Կենտրոնական մարմինների կողմից մշակված այս պլանը պետք է շտապ հասցնել Մ. Տ. Կայաններին, կոլտնտեսություններին, գյուղին ու անհատ տնտեսությանը, պետք է ճշգրտացնել տրված պլանը տեղերում, լայնացնելու իմաստով կազմել հանդիպական պլաններ։

Աշնան վարի ճիշտ ժամանակին կազմակերպումը նորից մի ապտակ է կուլակ—դաշնակցական տարրերին և նրանց ագենտուրան հանդիսացող աջ և «ձախ» ոպորտունիստներին, վորոնք չեն հավատում մեր տեմպերին, թերագնահատում են գյուղատնտեսության պլանային ղեկավարման աշխատանքները։

Ամեն որը թանգ է մեզ համար, վոչ մի լծկան, վոչ մի տրակտոր չպետք է կանգնի բայլեվիկյան աշնանացանին, աշնան վարի կազմակերպումը պետք է գնա ավելի լավ, քան անցյալ տարի։

ԱՇՆԱՆ «ԱՐԱԹ»-Ը ՑՆՎ. ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բամբակենու մշակման համար մեր մի շարք գիտական—փորձնական կայանները կատարել են տասնյակ փորձեր զանազան խնդիրների շուրջը, վորոնցից մեկը՝ դա աշնան արաթն է։

«Արաթի» նշանակությունը շատ խոշոր է, ջրի կուտակման, մալախոտերի և զանազան հիվանդ սերմերի վոչնչացման, հողի մեջ սննդատու նյութերի կուտակման տեսակետից։

Ամառվա ամիսներում մանավանդ բամբակազործական շրջաններից մեծ մասում ջրի պակաս է զգացվում, քանի որ մի շարք կուլտուրաներ և բոլոր ցանքերը միաժամանակ ջուր են պահանջում, հենց այդ կրիզիսը մեղմելու աշխատանքներն ավելի թեթևացնելու համար պետք է աշնան կազմակերպվին «արաթի» աշխատանքները, սակայն այնպես որ թույլ չտրվի կրկնվելու անցյալ տարվա խայտառակ վերաբերմունքը դեպի արաթի աշխատանքները։

«Արաթ» կատարելով ոռոգվում է ցելաջուրը և ամառվա մեկից—յերկու ջուրը, մյուս կողմից արաթ կատարած հողամասում ցանած բամբակը կծլի առանց արգելքի, որովհետև ցանելուց հետո չի ջրվում, դրա համար հողը կեղև չի կապում և չի խանգարում ծլելուն։ Ջրելու դեպքում շատ անգամ, յերբ տափանելը ուշանում է, ցանքը 100 %-ով վոչնչանում է՝ չի ծլում, մանավանդ կավային հողամասերում։ Ուրեմն արաթը կազմակերպվելով կապահովենք բամբակի ցանքի .աջող ծլելը, ինչպես այս տարի կատարվեց Ուլուխանլուլի շրջանի շարք գյուղերում։ Ներքին Նեջրլուն, Վերին Նեջրլուն և Ղամարլուլի շրջանի Նովրուզլուլի գյուղացիները գովասանքով յեն խոսում ու հիանում են արաթի տված ոգուտների մասին։

Բայլրևիչյան այս աշնանացանին տրված է 15.000 հեկտար արաթ կատարել բամբակացան շրջաններում, այս տարվա պլանը 500 %-ով ավելի յե անցյալ տարվա պլանից, նշանակում է այնպես պետք է կազմակերպել արաթի աշխատանքները, որ ամեն մի կոլխոզ, ամեն մի չքավոր ու միջակ գյուղացի ընդհուպ մոտենա այդ գործին, ոգտագործի աշնան առատ ջրերը։

Աշնան արաթը ժամանակին սկսելու համար պետք է 15 որ առաջ վարել արաթին հատկացվելիք հողամասերը, և այնպես կազմակերպել գործը, որ դեկտեմբերի մեկին պլանի կատարումն ավարտվի։

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Ագրոձեռնարկումները, որոնց մասին վերևում կանգ առանք, այն մինիմում ձեռնարկումներն են, որոնցով մենք կստանանք բերքի հսկայական հավելում։

Այս մինիմում աշխատանքները կատարելով մենք կնախապատրաստվենք հետագայի ավելի բարձր ձեռնարկումների կատարմանը։

Կհասնենք ու կանցնենք կապիտալիստական յերկրների գյուղատնտեսությունից։

Ներքև տալիս ենք ծրագրով նախատեսված շարքացանի, սերմազտիչների, դուքանների և շարքացանի տարածությունն ըստ շրջանների, (տես 36 էջ)։

Ինչպես յերևում է ներքև բերված տախտակից, շրջանների մեծ մասը դուքանով ապահովված են, միայն Թալինի, Իջևանի և Ղափանի շրջանները պետք է ստանան համապատասխան չափով դուքաններ կամ կենտրոնական պահեստից կամ մյուս շրջաններից, որ տեղ ավելին կա.

Շարքացան պետք է կատարեն կոլտնտեսությունները միջին հաշվով 75 %-ով, որից 14 շրջանների կոլտնտեսությունները՝ 100 %, իսկ մնացածները՝ 40,60,80 %, բացի Ղափանից, որտեղ 20%—ն նախատեսվում շարքացան կատարել, նկատի ունենալով հողի ռելիեֆը։

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՑԵՎ ՄԵՓԵՆԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԼԱՆ

Տախտակ № 8

№ №	ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ	Պտղանկվ. գուլթան. քանակը.— Պտղանկվող գուլթան	Ունեն	Պակասում է	Շաղգացան ցանքս. Կոլխոզ. %	Տարածութ.	Անհատական. %	Տարածութ.	Պտղանկվող շաղգացանների քանակը Պտղանկվ.	Ունեն	Պակասում է	Սերմացուներ պտղանկվ. Ամբողջ պտղանկվող	Ունեն	Ջրաման %	Պակասում է
1	Ալանիվերդու	100	1074	—	100	2950	8	400	67	55	12	37	65	Հայտնի չէ	
2	Ալաստայի	563	1705	—	100	1800	51	1900	77	77	—	50	50		
3	Աղթաբա	187	1430	—	100	500	60	600	21	21	—	32	50		
4	Աղտաբակ	633	633	—	70	2387	—	—	40	18	22	25	19		6
5	Ազարան	350	1570	—	100	730	100	1990	57	66	—	50	62		
6	Բասարդեչար	473	1513	—	100	1500	75	1500	69	65	4	44	38		6
7	Գորչա	640	880	—	40	2368	—	—	39	28	11	33	29		4
8	Դարալագյազ	760	782	—	80	1300	23	968	44	44	—	40	44		
9	Դիլիջան	475	1100	—	80	1240	34	1000	28	10	18	20	22		
10	Լենինական	984	2700	—	100	4100	100	2400	146	130	16	35	68		
11	Թալին	412	256	156	80	720	30	880	22	22	—	24	20		4
12	Իջևան	625	522	103	80	2400	14	808	47	38	9	22	24		
13	Կոտայք	993	1024	—	60	3360	7	308	63	42	21	35	41		
14	Զարաբխիսա	400	1107	—	100	1000	53	956	41	35	6	22	22		
15	Զանգեզուր	63	392	—	100	400	100	100	10	10	—	2	9		
16	Զանգան	652	352	300	20	1046	—	—	17	5	12	42	20		16
17	Զանգեզուրի	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—		—
18	Մարտունի	312	356	—	100	830	47	1012	37	36	—	31	18		13
19	Մեղրի	173	190	—	40	280	7	44	6	4	2	7	9		
20	Մասիսայինի	444	1430	—	100	1550	72	1809	67	76	—	50	62		
21	Նոր-Բայազետ	312	1175	—	100	900	78	1628	52	55	—	26	22		4
22	Շամշադին	538	568	—	60	1200	7	220	25	25	—	24	24		
23	Միսխան	610	709	—	40	1320	12	400	31	17	14	27	23		4
24	Սանահնով	475	1080	—	100	1650	100	2150	77	73	—	18	63		
25	Վաղաշատ	250	280	—	100	1130	100	900	42	—	—	8	13		
26	Վանքասար	100	416	—	100	910	3	44	15	16	—	4	21		
	Գումարը	12734	23544	559	75	37571	51	21512	1142	968	149	738	848		57

Անհատական սեկտորում միջին հաշվով պետք է շարքացան կատարվի ամբողջ ցանվելիք տարածության 51 %-ը, Լենինականի, Աբարանի, Ստեփանավանի, Ղամարլույի և Վաղպատի շրջանները պետք է 100 % շարքացան կատարեն, մնացած շրջանները՝ տարբեր տոկոսներով, ինչպես նշված է աղյուսակում, քանի վոր այդ շրջանների ցանվելիք տարածության մի մասը շարքացանի համար անհարմար է, մեքենայի ճանապարհ չկա, հողերը շատ քարքարոտ են, մի խոսքով վորոշ անհարմարություններ կան, վորոնք դեռ այս տարի թույլ չեն տալիս անցնելու մասսայական շարքացանի։

Պակասում է 149 շարքացան, վորը լրացվելու է։ Բացի 12 շրջաններից, մյուսներում շարքացանի քանակը դեռ ավելանում է, ուրեմն պետք է այնպես ոգտագործել, վոր շարքացանի պլանը գերակատարվի։

Սերմերի զտումը կատարվելու է 100 %-ով։ Դիլիջանի, Մարտունու, Աշտարակի և Բասարգեչարի շրջաններն ունեն սերմազտիչների կարիք, մնացած շրջաններն ապահովված են սերմազտիչներով։

Քանի վոր դարձանացանի ամբողջ սերմը պետք է զտել աշնանը, ուրեմն պետք է տալ լրիվ բեռնվածություն, ամեն մի սրիլերին նորմայով նախատեսված 800 ցենտներից վոչ պակաս։

Ցեղած սերմազտիչները պետք է վերանորոգել, պահեստի մասերը ձեռք բերել և կալի մեջ զտել ամբողջ սերմացուն։

ՀՀ Ազգային գրադարան
NL0203600

ԲԱՑԼՃԵՎԻԿՈՐԻՆ ԱՆՑԿԱՑՆԵՆՔ 2-ՐԴ ԱՇՆԱՆԱՑԱՆԸ

Վերադաս մարմինների կողմից տրված աշնանացանի այս ծրագիրը մարտական մի խնդիր է, դրված մեր տեղական մարմինների առաջ։ Առաջին խնդիրն է պլանը հասցնել գյուղը, կոլտնտեսություն և յուրաքանչյուր առանձին տնտեսության։

Այդ պլանները պետք է քննվեն կոմբջիջներում, բատրակ-չքավորական ժողովներում, կոլտնտեսություններում և հասարակական ընդհանուր ժողովներում, այն հաշվով, վոր ապահովվի աշնան ցանքի և գարնանացանքի համար պահանջվող բոլոր աշխատանքները 100 %-ով։

ՏՐՎԱԾ ՊԼԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՔՆՆՎԻ ԱՑՆ ԻՄԱՍՏՈՎ, ՎՈՐ ՎՈՉ ԹԵ ՓՈՔՐԱՑՎԻ, ԱՑԼ ԼԱՑՆԱՑՎԻ ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ

Աշնան աշխատանքներին զինված դիմավորելով՝ պիտի հիմնել ձիլան-չեղան, մեքենայի կայաններ, ըստ աշխատանքի ճյուղերի, կազմակերպել բրիգադներ, ուժերը ճիշտ դասավորել, կազմակերպված դաշտ դուրս գալով, աճնանացանի պլանը պիտի կատարել բայշեվիկորեն։

Այս բոլոր աշխատանքները պետք է տանել սոց.-մրցման յեվ հարվածայնության լայն ծավալման աշխատանքային բարձր վոգեվորության, պլանների կատարման ու գերակատարման նշանաբանով։ Աշնանացանը մի հզոր ազդակ պիտի լինի ավարտելու հիմնականում կոլեկտիվացումը բամբակացան շրջաններում 1932 թվին, իսկ Հայաստա-

32048

Նի մյուս շրջաններում 1932 – 1933 թվերին և դրա հիման վրա կուլակությունը լիկվիդացիայի ենթարկելու մասին գաղափարը։

Առաջ, դեպի յեռկրորդ բոլշեվիկյան սեմնանցանի Ցրոնցը — դեպի պայքարի Ցրոնցը։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅ. — ՍՍՌ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆԸ 3 կ. ($1^1/_4$ մ.)

М. ШАХБАЗЯН

ВТОРАЯ БОЛЬШЕВИТСКАЯ ОСЕННЯЯ ПОСЕВКАМПАНИЯ

Госиздат ССР Армении
Эривань—1931